



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 մայիսի 2019թ. թիվ 308-Ա

**«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի նախագահի 21.03.2019թ. և Թումանյան համայնքի ղեկավարի 15.03.2019թ. թիվ 133 գրությունները՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Շահվերդյան Նունե» բառերը փոխարինել «Խեչոյան Մերուժան» բառերով, «Ձավարյան Լևոն» բառերը՝ «Մխիթարյան Տիգրան» բառերով, «Մելիքսեթյան Կարինե» բառերը՝ «Վարդյան Ստեփան» բառերով և «Շաքարյան Երվանդ» բառերը՝ «Շահվերդյան Ռուզաննա» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Ալինա Խառատյանի թեկնածությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature

ԱՆԴԻԵՑ ԴՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ԴՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մայիսի 6
ք.Վանաձոր